

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/5

1 մարտի 2016 թ.

Քննարկվեց «Ա.Գոգինյան» ՍՊԸ 26.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 20.01.2016 թ-ի թիվ 5103108 ակտի դեմ:

«Ա.Գոգինյան» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Համաձայն 2015 թ-ի դեկտեմբերի 18-ի ՀՀ ՖՆ թիվ 5103108 հանձնարարագրի «Ա.Գոգինյան» ՍՊԸ-ում 2015 թ-ի դեկտեմբերի 26-ին Վանաձորի ՏՀՏ աշխատակիցների կողմից իրականացվել է ստուգում, որի արդյունքում արձանագրվել է ՀԴՄ շահագործման կանոնների խախտում և դրա կապակցությամբ կազմված ստուգման ակտի նախագիծը ստացվել է փոստային առաքմամբ: Ակտի նախագիծը սահմանված կարգով բողոքարկվել է Վանաձորի ՏՀՏ պետին, սակայն բողոքը չի բավարարվել և 20.01.2016թ. կազմվել է հիմնական ակտը:

Ստուգման ակտի դեմ ընկերությունն առարկում է ամբողջությամբ հետևյալ պատճառաբանություններով և հիմնավորումներով.

1. ՀՀ ՖՆ 18.12.2015 թ-ի թիվ 5103108 հանձնարարագրով դրանում ընդգրկված Վանաձորի ՏՀՏ պաշտոնատար անձանց հանձնարարվել է «Ա.Գոգինյան» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացնել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

1.1. Ստուգումն իրականացվել է Ա.Թամազյանի և Վ.Էվոյանի կողմից, որի մասին է վկայում նրանց կողմից 26.12.2015 թ-ին կազմված արձանագրությունը: Չնայած այն հանգամանքին, որ ստուգումն իրականացվել է հարկային տեսուչներ Ա.Թամազյանի և Վ.Էվոյանի կողմից, այնուամենայնիվ 26.12.2015 թ-ին կատարված և ստուգման արդյունքների վերաբերյալ կազմված թիվ 5103108 ակտի «ստուգողներ» բաժնում գրառված են Անուշ Թամազյանի, Գագիկ Գալստյանի, Վարուժան Էվոյանի և Գոհար Մանուկյանի անունները, այսինքն՝ ակտում առկա է իրականությանը չհամապատասխանող տեղեկություն, այն է՝ ստուգմանը Գագիկ Գալստյանը և Գոհար Մանուկյանը չեն մասնակցել, սակայն նրանց անունները ներառված է ակտում որպես ստուգմանը մասնակցած անձինք:

1.2. ՀՀ ՖՆ 18.12.2015թ-ի թիվ 5103108 հանձնարարագրով հանձնարարվել էր «Ա.Գոգինյան» ՍՊԸ-ում իրականացնել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, այնինչ հարկային տեսուչ Ա.Թամազյանը նշված տնտեսավարող սուբյեկտի մոտ կատարել է հսկիչ գնում:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի և նույն օրենքի 2-րդ հավելվածով հաստատված Կարգի 1.2. կետի նորմերի վերլուծության և փաստական հանգամանքների համադրման արդյունքում հաստատվում է, որ հարկային տեսուչ Ա.Թամազյանն իրականացրել է հսկիչ գնում, որի արդյունքում դուրս է եկել հանձնարարագրով իրեն վերապահված իրավասությունների շրջանակներից, այսինքն՝ իր գործողություններով խախտել է վերոշարադրյալ օրենքների պահանջները:

2. Հարկային տեսուչ Ա.Թամազյանը 26.12.2015թ. խանութում կատարված գնումների դիմաց վճարել է ընդամենը 270 դրամ, որն էլ ֆիքսված է ՀԴՄ-ի կտրոնի 11.52 ժամանակահատվածում:

Ըստ խանութի աշխատող Ռուզաննա Հարությունյանի հայտարարության, նա Ա.Թամազյանից ստացել է 270 դրամ և նրան տրամադրել է նույն գումարին համարժեք ՀԴՄ կտրոն և խանութի ներքին փաստաթուղթ, որոնցից ներքին փաստաթուղթը վերջինս ապրանքների վաճառքի բաժնի աշխատողին տրամադրելու փոխարեն դրել է վաճառասեղանին, այնտեղից վերցրել արձանագրության մեջ նշված 1.600 դրամ արժողությամբ ապրանքները և հեռացել խանութից, իսկ որոշ ժամանակ անց վերադառնալով արդեն իսկ կազմել է արձանագրությունը:

3. 26.12.2015թ. արձանագրությունը կազմվել է օրենքի կոպիտ խախտմամբ, այն է՝ արձանագրությունը կազմվել է առանց ընթերակաների ներկայության:

4. Համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների. « 1. (...): Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով:»:

Գործի փաստական հանգամանքներով հաստատված է (փոստային առաքման ծրարով), որ ստուգող մարմինը ստուգման ակտի նախագիծը և դրան կից փաստաթղթերը ուղարկել է 29.12.2015 թ-ին, այսինքն՝ ակտը կազմելու 4-րդ օրը, հետևապես դրանով թույլ է տրվել վերոհիշյալ իրավական նորմով սահմանված 3-օրյա ժամկետի խախտում:

Հաշվի առնելով վերը շարադրված փաստական հանգամանքները, ինչպես նաև հարկային մարմնի աշխատակիցների կողմից թույլ տրված օրենքների մի շարք կոպիտ խախտումները, ընկերությունը խնդրում է 20.01.2016թ. թիվ 5103108 ակտը չեղյալ համարել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 18.12.2015 թ-ի թիվ 5103108 հանձնարարագրի համաձայն «Ա.Գոգինյան» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 20.01.2016 թ-ի թիվ 5103108 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Անուշ Թամազյանի կողմից 26.12.2015թ-ին ժամը 11:55-ին ք.Վանաձոր, Գր.Լուսավորիչ 50 հասցեում գտնվող «Ա.Գոգինյան» ՍՊԸ-ին պատկանող մանրածախ առևտրի կետից կատարել է գնում 1600 դրամի չափով՝ 1 հատ հուշանվեր տոնածառ 900 դրամ, 1 հատ մոմակալ 700 դրամ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Դրամարկղի աշխատակցուհի Ռուզաննա Հարությունյանի կողմից չի տրամադրվել համապատասխան ՀԴՄ-ի կտրոն, այլ տրամադրվել է ներքին փաստաթուղթ-անվանացանկ ապրանքները համապատասխան բաժնից ստանալու համար: Բաժնի

վաճառողուհի Աննա Աշուղաթոյանը, ստանալով ներքին փաստաթուղթը, տրամադրել է Ա.Թամազյանի գնված ապրանքները: Ընկերության տնօրենի կամ լիազորված անձի բացակայության պատճառով հանձնարարագիրը հնարավոր չի եղել ներկայացնել ծանոթացման և այն տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին 26.12.2015թ.-ին ուղարկվել է փոստով: Ստուգում իրականացնող հարկային ծառայողները դրամարկղի աշխատակցուհի Ռուզաննա Հարությունյանին ներկայացրել են ծառայողական վկայականները: Ժամը 12:03-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 16370 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 1600 դրամը, ժամը 12:03-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 12:03-ին նորից դուրս բերվել «Z» հաշվետվությունը՝ 17970 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ արձանագրվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել է ՀՀ Կառավարության 01.08.2013թ.-ի թիվ 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 40-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որը դիտվում է որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում: Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման փաստը «Ա.Գոգինյան» ՍՊԸ-ի կողմից մեկ տարվա ընթացքում կրկնվել է (16.04.2015թ. կազմվել է թիվ 6108470 ակտը): Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Գանգատում բերված փաստարկների վերաբերյալ, որ Ակտում նշված են թվով չորս ստուգող պաշտոնատար անձանց վերաբերյալ տվյալներ, սակայն ստուգումն իրականացվել է միայն երկուսի կողմից, ինչի մասին վկայում է այն հանգամանքը, որ 26.12.2015թ.-ի արձանագրությունը ստորագրված է միայն երկուսի կողմից, հարկ է նշել հետևյալը.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ստուգման արդյունքները ամփոփելիս խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմվում է տեղեկանք, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ ակտի նախագիծ: Այնուհետև, սահմանված կարգով կազմվում է նաև ստուգման ակտը:

Վերոգրյալից հետևում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով ստուգման արդյունքները ամփոփելիս խախտումներ հայտնաբերելու դեպքում ակտի նախագիծ, այնուհետև նաև ստուգման ակտ կազմելուց բացի այլ փաստաթուղթ կազմելու պարտականություն ստուգումն իրականացնող անձանց համար նախատեսված չէ:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի նախագիծը ստորագրված է վերոգրյալ հանձնարարագրում ընդգրկված բոլոր պաշտոնատար անձանց կողմից, իսկ Ակտը ստորագրվել է միայն Գ.Գալստյանի և Վ.Էվոյանի կողմից: Ինչ վերաբերվում է ստուգմանը մասնակցած Ա.Թամազյանին և Գ.Մանուկյանին, ապա նրանց կողմից Ակտը չի ստորագրվել՝ սահմանված կարգով արձակուրդում գտնվելու պատճառով:

Վերոգրյալից հետևում է, որ գանգատում բերված պնդումները՝ ստուգումը Ակտում նշված թվով չորս պաշտոնատար անձանցից միայն երկուսի կողմից կատարված լինելու վերաբերյալ, հիմնավոր չեն:

Գանգատում բերված հաջորդ պնդումների վերաբերյալ, որ ՀՀ ֆինանսների նախարարի 18.12.2015թ.-ի թիվ 5103108 հանձնարարագրում ընդգրկված

պաշտոնատար անձանց հանձնարարվել է կատարել հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, սակայն իրականում կատարվել է հսկիչ գնում, հարկ է նշել, որ նշված պնդումները ևս հիմնավոր չեն և չեն համապատասխանում իրականությանը, քանի որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որը կվկայեր ընկերությունում հսկիչ գնում կատարված լինելու մասին: Մասնավորապես, թե ակտի նախագծում, թե Ակտում նշված է, որ հանձնարարագրով վերապահված իրավասության սահմաններում հարկային տեսուչ Անուշ Թամազյանի կողմից 26.12.2015թ-ին ժամը 11:55-ին «Ա.Գոգինյան» ՍՊԸ-ին պատկանող մանրածախ առևտրի կետից կատարվել է 1600 դրամի գնում, այլ ոչ թե հսկիչ գնում:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ հարկային տեսուչ Ա.Թամազյանը 26.12.2015թ-ին կատարված գնումների դիմաց վճարել է ընդամենը 270 դրամ, որն էլ ֆիքսվել է ՀԴՄ-ով, հարկ է նշել, որ նշված պնդումները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ Ակտում հստակ նշված է, որ հարկային տեսուչ Անուշ Թամազյանի կողմից 26.12.2015թ-ին ժամը 11:55-ին կատարվել է ոչ թե 270 դրամի, այլ՝ 1600 դրամի գնում, որի դիմաց վճարվել է համապատասխանաբար ոչ թե 270 դրամ, այլ՝ 1600 դրամ:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդմանը, որ խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ Ակտի նախագիծը ուղարկվել է 29.12.2015թ-ին, այսինքն՝ այն կազմելու 4-րդ օրը, նշվեց հետևյալը.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով:

Քննարկվող դեպքում ակտի նախագիծը կազմվել է 26.12.2015թ-ին, որն ընկերությանն է ուղարկվել 29.12.2015թ-ին: Այսինքն, ակտի նախագիծն ընկերությանն է ուղարկվել վերոգրյալ իրավանորմով նախատեսված 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 20.01.2016 թ-ի թիվ 5103108 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ